«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԺԱՄԻ «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ: ՕՐԳԱՄԻԶՄԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ **Կենսաբանություն**

ՀԵՂԻՆԱԿ՝ **Ռուզաննա Թորոսյան**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ **հ.82 հիմնական դպրոց**

ՄԵՆԹՈՐ՝

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 5

1.1. «Արժեք» և «արժեքային համակարգ» հասկացությունների մեկնաբանությունը....5

1.2. Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում 10

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ: ՕՐԳԱՆԻԶՄԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 15

2.1. Վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրությունն ըստ դպրոցական ծրագրի 15

2.2. Վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքային համակարգի ձևավորման մանկավարժական գործընթաց 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում*:*

Ժամանակակից հայաստանյան հասարակությունը զգալի փոփոխություններ է կրում. դա պայմանավորված է սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումներով, տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացմամբ, մշակութային և սոցիալական արժեքների և նորմերի անհամապատասխանությամբ և լղոզվածությամբ, հոգևորության անկմամբ և արժեքների շեշտադրումների փոփոխությամբ:

Նման պայմաններում ձևավորվող անհատը ենթարկվում է բարոյական ապակողմնորոշման և համամարդկային արժեքների կորստի սպառնալիքին: Ստեղծված իրավիճակին հատկապես զգայուն են դեռահասները, որոնք տարիքային առանձնահատկություններից ելնելով չեն կարող համարժեք գնահատական տալ իրողություններին: Դեռահասության տարիքի առանձնահատկությունն այն է, որ այս շրջանն առավել ենթակա է արտաքին ցանկացած ազդեցության: Ժամանակակից դեռահասի արժեքները ձևավորվում են սոցիալական անկայունության և արժեքային նորմատիվ անորոշության պայմաններում, երբ լրջորեն խախտվում են կայուն հասարակությանը բնորոշ արժեքները ավագ սերնդից երիտասարդներին փոխանցելու մեխանիզմները:

Արդի հասարակության արժեքային համակարգի առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ խիստ հասանելի են դարձել տարբեր տեղեկատվական տեխնոլոգիաները և հաղորդակցման միջոցները, որոնց առկայության պայմանում դեռահասը կարող է ծանոթանալ այնպիսի նյութերի, որոնք կձևավորեն սխալ արժեքային համակարգ: Ներկայումս, հատկապես, բաց հասանելիություն է ստացել վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման վերաբեյալ տեղեկատվությունը, ինչը, դեպքերի մեծամասնությամբ, ներկայացվում է այլ լույսի ներքո՝ դեռահասների մոտ ձևավորելով սխալ պատկերացումներ և խեղված արժեքային համակարգ:

Այս համատեքստում առանձնապես կարևորվում է դպրոցի և մանկավարժի դերը: Դեռահաս-սովորողը պետք է վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման վերաբերյալ գիտելիքը ստանա դպրոցում, իսկ ամրապնդի այն տանը: Հետևաբար, վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքային համակարգի ձևավորումն աներկբայորեն կախված է դպրոց-ծնող-դեռահաս փոխգործակցային շղթայի արդյունավետ կենսագործումից:

Առանց այդ շղթայի առկայության և արդյունավետ գործարկման անհնար կլինի հաղթահարել դեռևս Խորհրդային տարիներից եկող բարիերները և նշված թեմայի անխնդիր քննարկումը:

Վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքային համակարգի ձևավորման մանկավարժական գործընթացի կազմակերպման խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված ուսումնասիրվող թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում*:* Հետազոտության հիմնական նպատակն է կատարել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման դիտարկում վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում՝ այդ գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել «արժեք» և «արժեքային համակարգ» հասկացությունները,
- մեկնաբանել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացը,
- դիտարկել վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրությունն ըստ դպրոցական ծրագրերի,
- ուսումնասիրել վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքային համակարգի ձևավորման մանկավարժական գործընթացը և վեր հանել դրան բնորոշ խնդիրները:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում*:* Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման պայմաններում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (մեր դեպքում վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքային համակարգի ձևավորման պարագայում) ապահոված արդյունքները:

Հետազոտության իրականացման մեթոդի *(մեթոդիկայի)* ընտրություն*:* Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները,

- ուսումնասիրվել է վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի վերաբերյալ «Կենսաբանություն-8» դասագրքում զետեղված նյութը,
- սովորողներին առաջադրվել են լրացուցիչ, արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված համապատասխան միջոցներ:

Հետազոտության գերակա հարցը*:* Ո՞ր արժեքները կարելի է ներդնել սովորողների մեջ վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության համար:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը*:* Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 23 էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը, գրականության ցանկը):

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. «Արժեք» և «արժեքային համակարգ» հասկացությունների մեկնաբանությունը

Ժամանակակից կյանքում մշակութային, քաղաքական, սոցիալական փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են նաև անձի արժեքները, աշխարհընկալումները,

վարքաձևերը, ինչպես նաև աշխարհի, մարդկանց, բնության հետ հարաբերությունները: Այս տեսանկյունից այժմյան հասարակությունում ավելի արդիական են դառնում մարդու արժեքային կողմնորոշումները, մարդ-հասարակություն փոխհարաբերությունները հասկանալու և վերլուծելու միտումը, արժեքների տեղը և դերը որպես անձի ինքնության բաղադրիչներ դիտարկելը: Հասարակությունում առկա արժեքները և նորմերը ձևավորվում են տարիների պատմական և մշակութային զարգացման ընթացքում, ինչն էլ վկայում է այն մասին, որ արժեքների ձևավորումը մշակույթի ազդեցությունն անմիջականորեն իր վրա կրող գործընթաց է:

Վերջին տարիներին արժեքների ուսումնասիրությունը գտնվում է բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ գիտնականների, ինչպես, արժեքները համարվում են մշակույթի հիմնական բաղադրիչները[1]: Մշակութային արժեքները ձևավորում են անհատական և խմբային համոզմունքներ, նպատակներ և վարքաձևեր: Ըստ այդմ. հասարակական կյանքի մշակութային և սոցիալական փոփոխությունները հասկանալու համար կարևորվում են արժեքային կողմնորոշումների ուսումնասիրությունները, մասնավորապես, թե ինչ տեղ են զբաղեցնում արժեքներն անհատական և սոցիալական տիրույթներում, և ինչպիսին են տարբեր հասարակություններում մարդկանց արժեքային նախապատվությունները:

Արժեքներն առավել լավ հասկանալու համար նախ պարզաբանենք, թե ինչպես են սահմանվում դրանք տարբեր բառարաններում: «Արժեք» բառն առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է արժանի լինել[2]: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:

«Արժեք» բառը նաև հաճախ ներկայացնում են որպես ցանկացած երևույթ, դրսևորում, որ ինչ-որ բան արժեք ունի, կարևոր է կամ օգտակար: Արժեքները հանդես են գալիս որպես վարքի սկզբունքներ կամ ստանդարտներ, անձի դատողություններն այն մասին, թե ինչն է կարևոր կյանքում[3]:

Հայերեն բառարաններում ևս տրվում է «արժեք» հասկացության մեկնաբանությունը որպես ուշադրության արժանի հատկություն, նշվում է վերջինիս հասարակական

---

[1] Григорьева Н. А. Ценностные ориентации личности: теоретические основания и практика формирования : уч. пособие к спецкурсу. Волгоград : Перемена, 2003. - 144 с.

[2] Лавриненко, В. Философия: Учебник, под ред. проф. В. Н. Лавриненко. М.. Юристь. 2004., с. 401

[3] Головаха Е. И. Жизненная перспектива и ценностные ориентации личности // Психология личности в трудах отечественных психологов. - СПб.: Питер, 2000. - С. 51.

օգտակարության մասին: Գրեթե բոլոր մեկնաբանություններում «արժեք» հասկացությանը տրվում է նշանակալիի, կարևորի մեկնաբանություն[4]:

Արժեքների աղբյուրը հնարավոր է տեսնել մարդու կենսաբանական և հոգեբանական պահանջմունքներում, իսկ արժեքները՝ էմպիրիկ իրականության հնարավոր փաստերում: Այս տեսանկյունից յուրաքանչյուր առարկա, որը բավարարում է մարդկանց որևէ պահանջմունք, համարվում է արժեք: Փոփոխված է Աշխարհը կազմված է երկու ոլորտից. իրականություն (էմպիրիկ տրված փաստեր) և արժեքներ (իդեալական նորմեր): Յուրաքանչյուր արժեք դրսևորվում է որպես նպատակ ինքն իրենով, նրան ձգտում են հենց իր, այլ ոչ թե նյութական հետաքրքրության, շահի կամ զգայական հաճույքի համար: Արժեքը իրականությունը չէ. այլ իդեալը, որի կրողը վերազանցական սուբյեկտն է: Ճշմարիտ արժեքները ծնում են «մաքուր կամք», որի կրողը կրկին համարվում է ոչ թե անհատական, այլ վերազանցական սուբյեկտը: Պերսոնոլոգիական օնթոլոգիզմի ներկայացուցիչ Մաքս Շելերը գտնում էր, որ արժեքը, լինելով օբյեկտիվ, չի կարող դրսևորվել տրամաբանական մտածողության ձևերում: Արժեքը նորմա է, որը սոցիալական սուբյեկտի համար ունի որոշակի նշանակություն:

Արժեքը ցանկալիի պատկերացումն է, որն ազդում է առկա միջոցների ընտրության, ինչպես նաև գործողության վերջնական նպատակների վրա: Արժեքային կողմնորոշումների երկարաժամկետ հետազոտությունների հիման վրա ձևավորվեց արժեքային կողմնորոշումների տեսությունը: Հետազոտողները կարծում էին, որ միջմշակութային հասկացմանը և շփմանը կարող է նպաստել տրված մշակութային կողմնորոշումների վերլուծությունը մարդու կյանքի հինգ հիմնական կարևոր ոլորտներում.

1. Մարդկային բնույթ (բարի, չար, ...)
2. Մարդ-բնություն հարաբերություններ (ենթակա բնությանը, գերիշխող բնությանը և ներդաշնակություն բնության հետ)
3. ժամանակ (անցյալ/ավանդական, ներկա/հաճույք, ապագա/ հետաձգված բավականություն)
4. Ակտիվություն (լինել, դառնալ/ներքին զարգացում, անել/ պայքարել)
5. Սոցիալական հարաբերություններ (հիերարխիկ, կոլատերալ/ կոլեկտիվ-էգալիտար կամ անհատապաշտական)

Հաճախ արժեքը սահմանում են հետևյալ կերպ. «Հասկացություն՝ բացահայտ կամ թաքնված, որը տարբերակում է անհատին կամ բնութագրական է խմբի համար, որն

[4] Խաչատրյան, Ն.. Մանուսյան. Ս., Սերոբյան, Ա.. Գրիգորյան, Ն.. Հակոբջանյան, Ա. Մշակույթ. արժեքներ. համոգմունքներ. Վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում. Երևան. Հեղ. հրատ.. 2014, էջ 286.

ընտրության ազդեցություն է կրում հասանելի եղանակներից, իմաստներից և գործողություններից»[5]:

Արժեքների մեկ այլ բազմակողմանի տեսությունը պատկանում է Մ. Ռոկիչին (M. Rokeach): Ըստ հեղինակի՝ արժեքները բնութագրվում են հետևյալ հատկություններով.

1. Բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները, սակայն տարբեր մակարդակներով:
2. Արժեքները կազմավորված են համակարգում:
3. Արժեքների աղբյուրները դիտվում են մշակույթում, հասարակությունում և անձի մեջ:
4. Գրեթե բոլոր սոցիալական ֆենոմենները դետերմինացված են արժեքներով[6]:

Հեղինակն առանձնացրել է արժեքների 2 մեծ խումբ տերմինալ արժեքներ և ինստրումենտալ արժեքներ: Տերմինալ արժեքները համոգմունքներն են նրանում, որ անհատական գոյության վերջնական արդյունքն անձնական կամ հասարակական տեսանկյունից արժե նրան, որպեսզի նրան ձգտեն: Դրանք նպատակ-արժեքներն են, որոնք արտացոլում են երկարատև կյանքի հեռանկարը. որոշում են կյանքի իմաստը, կարևորը և նշանակալին նրանում: Ինստրումենտալ արժեքները դատողություններն են այն մասին, որ գործողության ինչ-որ պատկեր համարվում է անձնական և հասարակական տեսանկյունից նախընտրելի ցանկացած իրավիճակում: Գրանք միջոցի արժեքներ են, որոնք որոշում են մարդու վարքի կոնկրետ տեսակը կոնկրետ իրավիճակում:

Արժեքների մասին իր առանձին ուսումնասիրությունն է կատարել նաև Սուրինան[7]: Հեղինակը գտնում է, որ մարդկանց արժեքները ձևավորվում են մի շարք փուլերի ընթացքում: Առաջին փուլը «դրոշմի» փուլն է, որը տևում է մինչև 7 տարեկան: Ըստ նրա՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես ճշմարտություն, հատկապես, եթե դա տրվում է ծնողների կողմից: Երկրորդ փուլը «կրկնօրինակման» փուլն է. որն ընդգրկում է 8-13 տարեկան հասակը. երեխաները կրկնօրինակում են մարդկանց, մասնավորապես իրենց ծնողներին: Երրորդ փուլը «սոցիալականացման» փուլն է, որը տևում է 13-ից մինչև 21 տարեկանը: Այս փուլում մարդը հիմնականում իր վրա է կրում հասակակիցների ազդեցությունը, և ըստ հեղինակի՝ 21 և ավելի բարձր տարիքի մարդկանց արժեքների ձևավորման վրա կարևոր ազդություն ունեն նշանակալի հուզական իրադարձությունները:

---

[5] Яницкий М. С. Ценностные ориентации личности как динамическая система. - Кемерово : Кузбассвузиздат, 2000. - 203с.

[6] Методика "Ценностные ориентации" (М. Рокича). – Санкт-Петербург // Энциклопедия методов психолого-педагогической диагностики лиц с нарушениями речи : пособие для студентов, педагогов, логопедов и психологов / В.А. Калягин, Т.С. Овчинникова. – Санкт-Петербург : Каро, 2004. – С. 341-345.

[7] Сурина И.А. Ценности. Ценностные ориентации. Ценностное пространство. М., 1999

Արժեքների բնույթի մասին մեծ հետազոտություն և առանձին տեսություն է մշակել Ծ. Ծվարցը[8]: Այս տեսությանն առավել մանրամասն անդրադառնալը և մեզ համար տեսական և հետագայում՝ նաև գործնական վերլուծության հիմք ընդունելը պայմանավորված է նրանով, որ այն մեզ հնարավորություն է տալիս արժեքները դիտարկել ավելի համընդհանուր,համամարդկային տեսանկյունից. ինչպես նաև բազմակողմանի կապեր և վերլուծություններ կատարել ինքնության և արժեքների համատեքստում: Ըստ հեղինակի, երբ մենք մտածում ենք մեր արժեքների մասին, մենք մտածում ենք, թե ինչն է մեզ համար կարևոր կյանքում: Մեզանից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ արժեքներ (օրինակ՝ ձեռքբերման, անվտանգության, կամեցողության)՝ կարևորության տարբեր աստիճաններով: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի, բայց բացարձակ անկարևոր՝ մեկ այլ մարդու համար:

1.2. Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ սովորողի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության

[8] Մեջբերումն ըստ Бойко В. Ю. Типология ценностных позиций и состояние кризисного сознания // Ценности социальных групп и кризис общества. М., 1991.

հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է սովորողի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «սովորողների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[9]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև սովորողի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Սովորողը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական:

Սովորողի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով

[9] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ, էջ 64:

հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով սովորողների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են սովորողների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է սովորողների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին սովորողների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով

առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Հասակակիցների խմբում սովորողն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է սովորողների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ[10]:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ: ՕՐԳԱՆԻԶՄԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2.1. Վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրությունն ըստ դպրոցական ծրագրի

Վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրությունը նախատեսված է 8-րդ դասարանի «Կենսաբանություն» առարկայի դասաժամին: Այն բովանդակում է 4 թեմա.

- Վերարտադրողական համակարգի օրգանները: Սեռական բջիջների առաջացումը:

[10] Корчак Я., Избранные педагогические произведения, М., 1979, 458 с., с. 65







- Բեղմնավորում, ներարգանդային և հետսաղմնային զարգացում: Երեխայի ծնունդը, աճը և զարգացումը:





- Սեռավարակներ և դրանց կանխարգելումը:



- Վնասակար գործոնների ազդեցությունը մարդու զարգացման վրա: Վերարտադրողական համակարգի հիգիենան[11]:

Թեմայի ամբողջական դիտարկման արդյունքում սովորողների մոտ ձևավորվում է մարդու սեռական օրգանների կառուցվածքային և գործառութային առանձնահատկությունների տարբերակման կարողունակություն: Ուսուցիչը սովորողների ծանոթացնում է մարդու սեռական բջիջների առաջացմանը, բեղմնավորման գործընթացներին և երեխայի զարգացման փուլերին: Բացահայտում է երեխայի զարգացման շրջանները, պատկերացում է տալիս տղայի և աղջկա սեռական հասունացման առանձնահատկությունների վերաբերյալ: Թեմայի շրջանակներում սովորողների մեջ ձևավորվում է մարդու սեռական օրգաններով փոխանցվող հիվանդությունների և դրանց կանխարգելման միջոցների տարբերակման կարողունակություն: Ուսուցիչը սովորողներին ծանոթացնում է վերարտադրողական համակարգի ընդհանուր հիգիենայի կանոններին: Մեկնաբանում է թմրանյութերի և այլ ներգործուն նյութերի բացասական ազդեցությունը բազմացման օրգանների վրա[12]: Ամփոփելով ողջ ուսումնասիրությունները՝ ուսուցիչն ամփոփում է մարդու սեռական համակարգի կառուցվածքի և գործառույթների, մարդու սաղմի զարգացման և հասունացման, ինչպես նաև հիգիենայի մասին աշակերտների գիտելիքները:

Ցանկալի է նաև սովորողներին ներգրավել ստեղծագործական աշխատանքներում և գրավոր, հնարավորության դեպքում բանավոր կերպով ներկայացնել վաղ սեռական հարաբերությունների վտանգը, առողջության վրա վաղ սեռական հարաբերությունների ազդեցությունը, թմրանյութերի ազդեցությունը սեռական զարգացման վրա, սոցիալական

[11] Սիսակյան Ս.Հ., Թանգամյան Տ.Վ., Միրզոյան Գ.Ի. «Կենսաբանություն: Մարդ», 8-րդ դասարան, Եր., Տիգրան Մեծ, 2014., էջ 178-191:

[12] Ամիրյան Ս.Վ., Գևորգյան Է.Ս. և ուրիշներ, Կենսաբանություն: Ուսուցչի ձեռնարկ հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ և 8-րդ դասարանների համար., Եր., «Աստղիկ գրատուն», 2013., էջ 300-306:

գործոնների ազդեցությունը վերարտադրողական առողջության վրա, սեռական առողջությունը անհատական, ազգային և գլոբալ տեսանկյուններից:

2.2. Վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքային համակարգի ձևավորման մանկավարժական գործընթաց

Մինչ թեմայի շրջանակներում համապատասխան արժեքային համակարգի ձևավորումը խիստ անհրաժեշտ ենք համարում դպրոց-ծնող-դեռահաս փոխգործակցային շղթայի համատեքստում թեմայի արծարծումը: Ծնողների մոտ համապատասխան գիտակացական մակարդակի և դպրոցի, ուսուցչի հանդեպ վստահության ձևավորման պայմանում է միայն հնարավոր որ ծնողները ադեկվատ մոտենան թեմայի ուսումնասիրությանը:

Վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում, կարծում ենք, կարիք կա ձևավորել հետևյալ արժեքները.

- Լեզուն և խոսքը որպես արժեք:
- Ֆիզիկական և հոգեկան առողջությունը որպես արժեք:
- Բարոյականությունը որպես արժեք:
- Տեղեկատվության զտումը որպես արժեք:

Լեզուն և խոսքը որպես արժեք*:*

Լեզուն ազգային արժեք է: Ուսումնասիրվող թեմայի շրջանակներում առանձնակի կարևորություն ունի համապատասխան բառամթերքի ընտրությունը, որպեսզի դեռահասները հնարավորինս քիչ կաշկանդված լինեն:

Դպրոցը ոչ թե մեխանիկորեն տեքստերը մտապահողի (հետո՝ անշուշտ, մոռացողի), այլ մտածող անհատի ձևավորմանը պետք է նպաստի, օգնի յուրացնել ժողովրդավարական, մարդասիրական արժեքներ, սովորեցնի հարգելու, օգնելու, լսելու, քննադատելու, ինքնաարժևորման մշակույթը: Դրան կարելի է հասնել.

► որոշումների կայացման գործընթացների կազմակերպման ու հաղորդակցման եղանակներով.

► քննարկումների / բանավեճերի հնարավորության և հաստատության կյանքում ակտիվ մասնակցության միջոցով.

► ուսուցիչների, սովորողների և ծնողների հարաբերությունները փոխադարձ հարգանքի և վստահության վրա ձևավորելու աստիճանով:

Հարկ է դպրոցում ուսումը սկսելու պահից հատուկ ուշադրություն դարձնել ուսման լեզվի յուրացմանը, որը և՛ որպես առանձին դպրոցական առարկա, և՛ որպես այլ առարկաների դասավանդման միջոց, վճռորոշ դեր է կատարում գիտելիքի մատչելիության և ճանաչողական զարգացման ապահովման գործում:

Բոլոր առարկայական բնագավառներում, այդ թվում կենսաբանության հարացույցում, կան լեզվական կարողունակություն պարունակող աշխատանքներ.

► բացատրական տեքստերի ընթերցանություն և ընկալում, որոնք հաճախ կառուցվածքով տարբեր են՝ կախված առարկայական բնագավառի համատեքստից.

► լսել բարդ հարցերի բացատրություններն ուսուցչի կողմից.

► հարցերին պատասխանել գրավոր և բանավոր եղանակով.

► ներկայացնել հետազոտության և ուսումնասիրության արդյունքներ.

► մասնակցել թեմատիկ քննարկումների:

Լեզվական, հաղորդակցման և բազմալեզու հմտությունների ձևավորումը վերարտադրողական համակարգի ուսումնասիրության համատեքստում կարևոր է այնքանով, որ ապագայում դեռահասը կկարողանա մի շարք իրավիճակներում հստակ հաղորդակցվել, արտահայտել սեփական համոզմունքներ, կարծիքներ, հետաքրքրություններ և կարիքներ, հիմնավորել և պարզաբանել գաղափարները, պաշտպանել սեփական շահերը:

Ֆիզիկական և հոգեկան առողջությունը որպես արժեք*:*

Առողջության որպես արժեքի ձևավորման գործում մեծ դեր ունի մանկավարժական վալեոլոգիան: Մանկավարժական վալեոլոգիայի խնդիրներն են զարգացնել սովորողների գիտական աշխարհայացքը, անհրաժեշտ գիտելիքներ տրամադրել և հմտություններ զարգացնել ներքոհիշյալ հարցերի վերաբերյալ՝

- առողջության պահպանման եղանակներ, մեթոդները և հիմնական միջոցառումները,
- վնասակար սովորությունների, սխալ վարքագծի պատճառով առաջացող հիվանդությունների կանխարգելումը,
- ծխախոտի, ալկոհոլի, թմրամիջոցների նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորումը,
- առողջության պահպանմանն ուղղված պատասխանատու, անվտանգ վարքագծի ձևավորումը,
- շրջակա միջավայրի որակի գնահատումը,

- մարդու կյանքին և առողջությանը անմիջական վտանգ սպառնացող հիվանդությունների (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սեռավարակներ), թմրամիջոցներից կախվածությունների նախականխումը:

Վալեոլոգիական կրթությունը կնպաստի սովորողների ֆիզիկական, մտավոր, բարոյական, հուզական զարգացմանը: Այն հնարավորություն կտա արժեքների համակարգում կարևորել առողջությունը, ընտանիքը, առողջ ընտանեկան հարաբերությունները, կայունությունը, ինչպես նաև սեռերի միջև փոխհարաբերություններում հարգանքը, սերը և հոգածությունը:

Վալեոլոգիական կրթության միջոցով հնարավոր կլինի նպաստել հստակ դիրքորոշումների ձևավորմանը, որոնք իրենց հերթին կօգնեն սովորողներին ճիշտ, հաշվեկշռված որոշումներ կայացնել:

Առողջության, որպես արժեքի ձևավորման գործում առանձնակի կարևորություն ունի պատասխանատու վարքագծի ձևավորումը: Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները՝ սեռավարակները, վեներական հիվանդությունների հետ համեմատած՝ ավելի ընդգրկուն են: Պարզապես վեներական հիվանդությունները սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների մի մասն են կազմում: Սեռավարակները բաժանվում են մի քանի խմբի՝ «դասական», «նոր» վեներական հիվանդություններ, մաշկային հիվանդություններ, որոնք փոխանցվում են սեռական ճանապարհով, հիվանդություններ, որոնք ախտահարում են մյուս օրգան-համակարգերը: Ներկայումս առանձնանում են մոտ 20-25 տեսակի հիվանդություններ, որոնք փոխանցվում են սեռական ճանապարհով: «Դասական» վեներական հիվանդությունների թվին են պատկանում գոնորեան, սիֆիլիսը, գարդնելլերան, սեռական օրգանների հերպեսը, տրիխոմոնոզը, ուրեապլազմոզը, քլամիդիոզը և այլն: Սեռական ճանապարհով փոխանցվող ամենահայտնի հիվանդությունը քոսն է, իսկ ՁԻԱՀ-ը, հեպատիտի B և C տեսակները, լյամբլիզը հիվանդություններ են, որոնք ախտահարում են նաև մյուս օրգանները: Չնայած հեպատիտ C-ն ավելի հաճախ փոխանցվում է արյան միջոցով:

Աշակերտը պետք է իմանա առողջության նշանակությունը մարդու բնականոն կենսագործունեության համար, առողջությունը ամրապնդող (հիգիենա, առողջ սնունդ, օրգանիզմի կոփում, սեփական հույզերի կառավարման հմտություն) ու վտանգող վնասակար գործոններ (ծխախոտ, ալկոհոլ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, հիպոդինամիա (նստակյաց կյանք) և այլն): Իրեն շրջապատող սոցիալական և բնական միջավայրի ազդեցությունը առողջության վրա: Մարդու հարմարվողականաությունը նոր պայմաններին (ադապտացիա):

Աշակերտը պետք է կարողանա գնահատել առողջությունը որպես առաջնային արժեք և դրսևորել առողջության պահպանմանը նպաստող վարքագիծ:

Աշակերտը պետք է իմանա ինչ է կախվածությունը, ինչպես է այն առաջանում: Ինչ են՝ ալկոհոլը, ծխախոտը ը, թմրանյութը: Ինչու են արտադրվում՝ ծխախոտը, ալկոհոլային խմիչքները: Թմրամիջոցներ, դրանց թողած ազդեցությունը օրգանիզմի վրա (շնչառական ուղիների և սիրտանոթային համակարգի և այլ հիվանդություններ): Դրանցից առաջացող հոգեկան և ֆիզիկական կախվածությունը: Ինչպես և ինչ արագությամբ է զարգանում կախվածությունը, դրա կանխարգելումը: Շրջակա միջավայրի որակի դրական և բացասական ազդեցությունը առողջության վրա:

Աշակերտը պետք է կարողանա գնահատել իրավիճակը, խուսափել այնպիսի իրավիճակներում հայտնվելուց, որոնք կարող են ռիսկային լինել: Կարողանա գիտակցված կերպով «ոչ» ասել ապօրինի թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր առաջարկող անձանց, լիարժեք կերպով պատկերացնել դրանց օգտագործման հնարավոր հետևանքները:

Աշակերտը պետք է իմանա սեռական հասունացման շրջանում դեռահասի օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխությունները: Իմանա տղաների և աղջիկների օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, սեռական հասունացման շրջանում: Իմանա սեռական հասունացման շրջանում անձնական հիգիենայի առանձնահատկությունների և անհրաժեշտության մասին: Աշակերտը պետք է կարողանա պահպանել անձնական հիգիենայի կանոնները սեռական հասունացման շրջանում:

Աշակերտը պետք է գիտակցի, որքան կարևոր են սիրո տարբեր դրսևորումները մարդու կյանքում: Գնահատի սերը, որպես սեռերի հոգեկան և ֆիզիկական մտերմության հիմք: Աշակերտը պետք է Ճանաչի մարդու կարիքները, առողջությունը որպես առաջնային կարիք՝ ինքնահաստատման, սեփական նախասիրությունների իրացման, միջանձնային ներդաշնակ հարաբերությունների կարգավորման: Ճանաչի ընտանիքի դերը, որպես անհատի և հասարակության առողջ համակեցության գործոնի:

Աշակերտը պետք է տեղեկացված լինի վերարտադրությունը վտանգող հիվանդությունների, դրանց տարածման և կանխարգելման ուղիների մասին, կարողանա որոշումներ կայացնել և վտանգից խուսափել, ունենալ պատասխանատու վարքագիծ: Պետք է տեղեկացված լինի անխոհեմ սեռական վարքագծի հնարավոր հետևանքների մասին: Աշակերտը պետք է կարողանա խուսափել վաղաժամ սեռական կապերից, կարողանա տարբերել սեռավարակների ախտանշանները, գիտակցի դրանց հետևանքները և պաշտպանվելու միջոցները ուշադիր լինել իրեն մատուցվող բժշկական ծառայությունների որակի նկատմամբ: Գիտակցի իր արարքների հնարավոր հետևանքները, հասկանա հղիության պատասխանատվության չափը և այն, որ դա հավասարապես և տղայի, և աղջկա պատասխանատվությունն է:

Աշակերտը պետք է իմանա ինչ է ՄԻԱՎ–ը, ինչ է ՁԻԱՀ-ը, ինչպես է գործում վիրուսը, որո՞նք են փոխանցման ուղիները, որոնք են ՄԻԱՎ–ի նկատմամբ առավել խոցելի խմբերը: ՄԻԱՎ-ի տարածման բնույթը: Իմանա ինչ ազդեցություն է թողնում ՄԻԱՎ-ն օրգանիզմի վրա, ինչ է «պատուհանի շրջանը»: Աշակերտը պետք է իմանա որ դեպքում, երբ և որտեղ կարելի է անցնել ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություն, ովքեր ունեն նման հետազոտության կարիք, որոնք են ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտության արդյունքների գաղտնիության երաշխիքները: Աշակերտը պետք է իմանա ինչ փուլերով է զարգանում ՁԻԱՀ-ը, ինչ ախտանշաններ ունի ՁԻԱՀ-ը, ինչն է նպաստում ՁԻԱՀ-ի զարգացմանը և հստակ պատկերացնի կանխարգելման միջոցները:

Բարոյականությունը որպես արժեք*:*

Որքան էլ հասարակությունները զարգանան, անբարոյական վարքագիծը մնալու է չխրախուսված: Մեծ է ուսուցչի դերը և դպրոցի ներգրավվածությունը դեպի հասարակություն բարոյական անհատ ճանապարհելու գործում: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:
- Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:
- Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:
- Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ[13]:

Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ:

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է

[13] Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.: 298 էջ, էջ 59:

համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին: Այստեղ ևս կարևորվում է ծնողների ներգրավվածությունը և դպրոց-ծնող համագործակցության արդյունքում ծնողների բարոյական կերպարի ձևավորումը:

Տեղեկատվության զտումը որպես արժեք*:*

Օրեցօր ավելանում է ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ համացանցային տեղեկատվությունը, որը հաճախ անհիմն ուռճացված է: Դեռահասներին պետք է սովորեցնել կարողանալ զտել տեղեկատվությունը, ինչը հնարավոր է միայն եթե դեռահասը ունի ճշմարիտ տեղեկատվություն, որը պետք է ստանա դպրոցում: Ծնողների ներգրավվածությունն այստեղ ինտերնետ հասանելիության սահմանափակությունն է, որը հնարավոր է օպերատորների հետ համագործակցության միջոցով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ամփոփելով արժեքների ուսումնասիրման տեսական և կիրառական ասպեկտները մենք տեսնում ենք, որ արժեքների հայեցակարգի վրա հիմնված հետազոտությունները կարող են վերաբերել մարդկային կյանքի տարբեր ասպեկտներին: Արժեքներն առանցքային են մարդկային մտքի, զգացմունքների և վարքագծի մեջ: Դրանք մշակույթի անքակտելի մասն են կազմում, և, հետևաբար, արժեքների միջմշակութային հետազոտությունները թույլ են տալիս հասկանալ մշակութային տվյալ ժամանակաշրջանին բնորոշ խնդիրները: Տարբեր տեսաբաններ օգտագործում են տարբեր մշակութային չափումներ (ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ, ֆեմինինություն-մասկուլինություն, ներդաշնակություն, հավասարություն և այլն), որոնց բազմազանությունը թույլ է տալիս վեր հանել արժեքներով պայմանավորված հասարակական առանձնահատկությունների ամբողջ համախումբը:

Արժեքային համակարգի ձևավորումն առանձնակի կարևություն ունի դպրոցական գործընթացներում, մասնավորապես այն դասաժամերի ընթացքում, որոնք կարող են նպաստել սովորողների կողմից բարդ յուրացվող թեմաների ներկայացման համար անհրաժեշտ խոսքային, ֆիզիկական և հոգեկան առողջության, բարոյական արժեքների ձևավորմանը:

Այս արժեքների ձևավորումն առանձնակի կարևորություն են ձեռք բերում 8-րդ դասարանի «Կենսաբանություն» դասաժամին վերարտադրողական համակարգի և օրգանիզմի անհատական զարգացման թեմայի ուսումնասիրության շրջանակներում: Ինչպես եզրակացրինք մեր ուսումնասիրությունների արդյունքում, թեմայի դիտարկումը բավականին խնդրահարույց է, քանի որ չկա գիտակցական բավականաչափ մակարդակ թե՛ ներդպրոցական, թե՛ արտադպրոցական համատեքստերում: Հաճախ ուսուցիչը չի կարողանում պատշաճ մեկնաբանել դասանյութը, քանի որ ցածր գիտակցական մակարդակի հետևանքով դասարանում առաջանում է աղմուկ, ծիծաղ: Քիչ չեն դեպքերը, երբ ծնողների կողմից ևս բացասական վերաբերմունք է արտահայտվում սույն թեմայի դիտարկման առումով:

Առաջարկում ենք այս համատեքստում ուժեղացնել ուսուցիչ-ծնող կապը: Դասանյութի վերաբերյալ քննարկում անցկացնել նախ ծնողների հետ, բացատրել, որ դրանք միտված են իրենց երեխաների մոտ համապատասխան արժեքների ձևավորմանը, ապա խնդրել, որ տանն իրենց երեխաներին նախապատրաստեն այդ քննարկմանը:

Առաջարկում ենք նաև ակտիվորեն ներգրավել ոստիկանության համապատասխան բաժինների աշխատակիցներին և բուժաշխատողների: Ոստիկանության աշխատակիցների ներգրավվածությունը թույլ կտա դեռահասների մոտ ձևավորել համացանցային տեղեկատվության զտման արժեքներ, ճիշտը և ուռճացվածը տարբերակելու հմտություններ: Բուժաշխատողների ներգրավվածությունը թույլ կտա դեռահասների մոտ ձևավորել ֆիզիկական և հոգեկան առողջության արժեքներ. դեռահասները ամբողջովին կընկալեն սեռավարակների էությունը, դրանց վտանգն իրենց ողջ հետագա կյանքի որակի համար:

Առաջարկում ենք նաև ուսուցիչների հետ տանել շարունակական աշխատանքներ, մասնավորապես, մարզերում: Հաճախ ուսուցիչները, կաշկանդված լինելով սովորողների և ծնողների վերաբերմունքով, խուսանավում են սույն թեմայի դիտարկումից:

Ամփոփելով՝ նշենք, որ ընդհանուր առմամբ հայ հասարակության մեջ ցածր է սեռական կրթության և դաստիարակության վերաբերյալ գիտակցական մակարդակը: Խնդիրը խորքային է, պահանջում է տարիների աշխատանք և գործուն կարգավորման մեխանիզմ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրյան Ս.Վ., Գևորգյան Է.Ս. և ուրիշներ, Կենսաբանություն: Ուսուցչի ձեռնարկ հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ և 8-րդ դասարանների համար., Եր., «Աստղիկ գրատուն», 2013., էջ 300-306:
2. Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.: 298 էջ, էջ 59:
3. Խաչատրյան, Ն.. Մանուսյան. Ս., Սերոբյան, Ա.. Գրիգորյան, Ն.. Հակոբջանյան, Ա. Մշակույթ. արժեքներ. համոզմունքներ. Վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում. Երևան. Հեղ. հրատ.. 2014, էջ 286.
4. Սիսակյան Ս.Հ., Թանգամյան Տ.Վ., Միրզոյան Գ.Ի. «Կենսաբանություն: Մարդ», 8-րդ դասարան, Եր., Տիգրան Մեծ, 2014., էջ 178-191:
5. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ, էջ 64:
6. Бойко В. Ю. Типология ценностных позиций и состояние кризисного сознания // Ценности социальных групп и кризис общества. М., 1991.
7. Головаха Е. И. Жизненная перспектива и ценностные ориентации личности // Психология личности в трудах отечественных психологов. - СПб.: Питер, 2000. - С. 51.
8. Григорьева Н. А. Ценностные ориентации личности: теоретические основания и практика формирования : уч. пособие к спецкурсу. Волгоград : Перемена, 2003. - 144 с.
9. Корчак Я., Избранные педагогические произведения, М., 1979, 458 с., с. 65
10. Лавриненко, В. Философия: Учебник, под ред. проф. В. Н. Лавриненко. М.. Юристь. 2004., с. 401

11. Методика "Ценностные ориентации" (М. Рокича). – Санкт-Петербург // Энциклопедия методов психолого-педагогической диагностики лиц с нарушениями речи : пособие для студентов, педагогов, логопедов и психологов / В.А. Калягин, Т.С. Овчинникова. – Санкт-Петербург : Каро, 2004. – С. 341-345.
12. Сурина И.А. Ценности. Ценностные ориентации. Ценностное пространство. М., 1999
13. Яницкий М. С. Ценностные ориентации личности как динамическая система. - Кемерово : Кузбассвузиздат, 2000. - 203с.